

**ՏԱՐԱԾՔԻ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՍՆ-19/1-16**

ք.Երևան

«15» հունիսի 2016թ.

«Ձանգակ-97» ՍՊԸ-ն (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Կոմիտաս 49/2), ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Սոկրատ Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, որի փոխարեն հանդես է գալիս ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ծնված՝ 23.05.1963թ., անձնագիր՝ AK0556805, տրված՝ 13.07.2010թ.-13.07.2020թ. 019-ի կողմից, հաշվառված՝ ք.Աբովյան, Սարալանջի փողոց 14-19 հասցեում, 09.06.2016թ. տրված լիազորագրի հիման վրա, (այսուհետև՝ Վարձատու), մի կողմից, և, ՀՀ սփյուռքի նախարարությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3) ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Ջաքարյանի (անձնագիր AK0487527, տրված՝ 03.05.2015թ.-03.05.2025թ. 025 կողմից), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, որի փոխարեն հանդես է գալիս ՀԱՅԿ ՄՈՎՍԵՍԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ, ծնված՝ 22.06.1977թ., անձնագիր՝ AM0494992, տրված՝ 01.11.2011թ.-01.11.2021թ. 046-ի կողմից, հաշվառված՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջորավան 1 փողոց 2 հասցեում, 14.06.2016թ. տրված թիվ 06/16/2 լիազորագրի հիման վրա, (այսուհետև՝ Վարձակալ) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ոչ բնակելի տարածք (նեյր), որը տեղակայված է ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կոմիտաս 49/2, հասցեում՝ (այսուհետև՝ «Օբյեկտ»), իր կանոնադրությանը համապատասխան գործունեություն իրականացնելու համար: Ենթավարձակալության հանձնվող տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 106.4 (մեկ հարյուր վեց ամբողջ չորս) քառակուսի մետր՝ հատակագիծը կցվում է և հանդիսանում է սույն պայմանագրի բաղկացուցիչ մասը:

1.2 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 2016թ հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև «31» դեկտեմբերի 2016 թվականը: Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից 2 /երկու/ ամիս առաջ՝ ծանուցելով մյուս կողմին:

«Ձանգակ-97» ՍՊԸ հանդիսանում է տվյալ տարածքի վարձակալ, որը հաստատվում է ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ կողմից վարձակալության իրավունքը գրանցած N 29072015-01-0115 վկայականով:

1.3 Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում Վարձատուն կորցնում է Օբյեկտից օգտվելու իրավունքը:

1.4 Սույն պայմանագրի գործողության ընթացքում Օբյեկտի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.5 Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը վաճառված, գրավ դրված ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, համաձայն՝ 2016 թվականի մայիսի 31-ի N ՄՏ-31052016-01-0131 միասնական տեղեկանքի:

1.6 Վարձատուն Օբյեկտը վարձակալության է հանձնել Վարձակալին 2016 թվականի հունվարի 1-ից:

1.7 Օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու:

1.8 Օբյեկտի վարձակալության հանձնելը հիմք չէ դրա նկատմամբ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1 պահանջել Վարձակալից Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2 Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.

2.1.3 եթե Վարձակալը Օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 10 /տասը/ օրվա ընթացքում ստորագրել հանձնման ընդունման ակտը

2.2.2 Իրեն հայտնի դառնալու պես, Վարձակալին անհապաղ գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատ անհրաժեշտության մասին՝ կապված Օբյեկտի հիմնական վերանորոգման կամ քաղաքաշինան նկատառումներով քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ:

2.2.3 Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությամբ համապատասխանող վիճակում՝ դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով:

2.2.4 Իր հաշվին կատարել Օբյեկտի հիմնական վերանորոգումը.

2.2.5 Վարձակալին նախազուգահեռ վարձակալության հանձնվող Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին.

2.2.6 Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Օբյեկտի թերությունները կամ համաչափ իջեցնել վարձավճարը.

2.2.8. Իր հաշվին կատարել սույն պայմանագրի նոտարական վավերացման և վարձակալության հանձնված Օբյեկտի գրանցման հետ կապված ծախսերը.

2.3 Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1 պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 2.2.1 կետով սահմանված ժամկետում իր տրամադրելու Օբյեկտը, նրա պատկանելիքներով ու փաստաթղթերով.

2.3.2 Օբյեկտի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունն հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3 Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Օբյեկտի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Օբյեկտի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.4 սույն պայմանագրի 2.2.4 կետում նշված Վարձատուի կողմից հիմնական վերանորոգված կատարելու պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.4.1 կատարել անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը.

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությամբ համապատասխան.

2.4.2. Ժամանակին մուծել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 4-րդ կետում սահմանված վճարը /վարձավճարը/

2.4.3. Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Օբյեկտն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը

2.4.4. Վարձակալած տարածքներում պահպանել սանիտարա-հակահամաճարային, հակահրդեհային պահանջները, ինչպես նաև այն կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու իր վարձակալած Օբյեկտի նկատմամբ.

2.4.5. Վարձատուին անմիջապես տեղեկացնել Օբյեկտի ամեն մի վնասվածքի, վթարի կամ սանիտարության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Օբյեկտին, և ժամանակի ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև Օբյեկտը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ.

2.4.6. Առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել պայմանագրեր և չմտնել Օբյեկտի հետ կապված գործարքների մեջ: Առանց նշված համաձայնության՝ Վարձակալի կողմից նման պայմանագրեր կնքելը կամ նման գործարքներ կատարելը Վարձատուին իրավունք են տալիս պահանջելու վաղաժամկետ լուծելու պայմանագիրը.

2.4.7. Ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Օբյեկտ սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ.

2.4.8. Օբյեկտն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնական մաշվածությունը.

2.4.8.1 սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված ի գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգի տակ են դնում Օբյեկտը, իսկ վարձակալված Օբյեկտից դուրս՝ բնապահպանական և սանիտարական իրավիճակը:

3. Հանձնման-ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Վարձակալի և Վարձատուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի համարը և ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ավարտի օրը ներառյալ Վարձատուն և Վարձակալն է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (համար N 3) և պայմանագրի արդյունքը Վարձակալին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (համար N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե ստանձնած պարտավորությունները համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Վարձատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով ստանձնված միջոցները.

բ) Վարձակալի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Վարձատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում պարտավորված է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակ և ամ պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Վարձատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները

4.1 Օբյեկտի օգտագործման համար ամսական վարձավճարը կազմում է 142855 (մեկ հարյուր յոթասուներկու հազար ութ հարյուր հիսուն հինգ) ՀՀ դրամ՝ ՀՀ պետական բյուջեով ՀՀ սփյուռքի կառավարության կողմից ենթավարձակալության համար նախատեսված հատկացումների սահմաններում: Վարձատունը է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր այլ վճարները, սույն պայմանագրի նոտարական վավերացման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վարձատուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Վարձավճարը վճարում է ըստ ամիսների՝ անկանխիկ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման օրինակագրույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված տարածքի վարձակալության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2016 թ.:

4.3. 4.1. կետում նշված վարձավճարը ենթակա է վճարման 2016 թվականի հունիս ամսից, որի ժամանակ հարկային հաշիվները դուրս են գրվելու սույն թվականի հուլիս ամսից սկսած:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,5% -ի չափով և տույժ՝ 0,05%-ի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.2 Սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարների հետ:

5.3 Վարձակալի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքը Վարձակալի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.4 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումար 0,05 % չափով:

5.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորություններ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում և օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ ավերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանկամբողջ ժամանակահատվածի համար. Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառով վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

5.7 Վարձատուն պատասխանատվություն չի կրում Օբյեկտի այն թերությունների համար, որոնք նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի է եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի հայտնաբերեր Օբյեկտը՝ զննելիս:

5.8 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորություններ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում և օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.8.1 Տուգանքի և (կամ) տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Վարձակալած Օբյեկտի բարելավումները

6.1 Վարձակալած Օբյեկտից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

6.2 Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի ստանալ հատուցում, որի չափն որոշվում փոխհամաձայնությամբ:

7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

7.1 Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատական կարգով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

7.1.1 Օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կարգվանկի խախտումներով.

7.1.2 էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը.

7.1.3 սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Օբյեկտի ընթացիկ վերանորոգումը:

7.2 Վարձակալի պահանջով՝ սույն պայմանագիրը կարող է դատական կարգով վաղաժամկետ լուծվել, եթե՝

7.2.1 Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Օբյեկտը կամ խոչընդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

7.2.2 Վարձակալին հանձնված Օբյեկտն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնք մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին, վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս:

7.2.3 Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Օբյեկտը դարձնում օգտագործման համար ոչ պիտանի:

8. Այլ պայմաններ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 2016թ հունվարի 1 -ից ծագած հարաբերությունների վրա, ինչը չի առարկում «Տաթև գիտակրթական համալիր» ՍՊԸ-ն (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Կոմիտաս 49/2), (այսուհետև՝ Օբյեկտի մեֆականատեր), ի դեմս ընկերության տնօրեն Սուկրատ Մկրտչյանի՝ համաձայն 23.03.2015թ թիվ 23032015-01-0169 Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ՀՀ վկայականի, որի «Օբյեկտը» հանձնվել է վարձակալության 2015 թվականի հունիսի 1-ին «Զանգակ-97» ՍՊԸ-ին, (այսուհետև՝ Վարձակալ), (գտնվելու հասցեն՝ ք. Երևան, Կոմիտաս 49/2), ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Սուկրատ Մկրտչյանի::

8.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.4 Սույն պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Վարձակալի մոտ չի վերացել պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.5 Օբյեկտի վրա արտաքին գովազդի և տեղեկատվության օբյեկտների տեղադրումն իրականացնում է Վարձակալը կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքած անձը՝ առանց Վարձատուի համաձայնության:

8.6 Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

8.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ իսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Վարձակալն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Վարձակալի ստացածով:

8.8 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վարձակալ կամ Վարձատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վարձատուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վարձատուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով :

8.9.1 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.9.2 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարա իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, հավելվածները հանդիսանում են պայմանա անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համ կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցությ արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցությ միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությ շարունակվում է 3(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագի այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վ Ա Ր Ձ Ա Տ ՈՒ


«Ձանգակ-97» ՍՊԸ

ք. Երևան, Կոմիտաս 49/2

«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Հ/Հ 217001-0040013-001

ՀՎՀՀ 00830786



(ստորագրություն)

Կ.Տ.

Վ Ա Ր Ձ Ա Կ Ա Լ

«Հ սիյուոքի նախարարություն

ք. Երևան Վ. Մարգարյան 3

ՖՆ Գործառնական վարչություն

Հ/Հ 900011000107

ՀՎՀՀ 02705838



(ստորագրություն)

Կ.Տ.

Երկու հազար տասնվեց թվականի հունիսի տասնհինգին

Սույն պայմանագիրը վավերացված է իմ «Մալաթիա» նոտարական տարածքի նոտար՝ ԱՐՄԵՆ ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիր ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը նրանց ներկայացուցիչների լիազորությունները, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ՝ «Ձանգակ-97» ՍՊԸ իրավունքները ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 655 հոդվածի համաձայն, սույն պայմանագրի ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրում՝ երեսուներջ ժամկետում: Գրանցված է սեղանամատյանում՝ 1700 Գանձված է պետական տուրք և ծառայության վճա համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

ՆՈՏԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍՈՒՐԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ




ՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

<< ՏԱԹԵԿ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ >> ՍՊԸ

Ամուն. ազգանուն, անվանում

Երևան Համայնք Արաբկիր Հասցե Կոմիտասի պող. թիվ հ. 49/2

Մասշտաբ 1:200



իսանցվել ա
վասարագր
պայմանագր
բը:
րելու համա
ազդեցությա
ատեսել կա
ազմական
դակցությա
նհնարին է
զդեցություն
այմանագիր


Ն ՍՈՒԹԵՆԻ
այմանագիր
նակություն
ակ-97» ՍՊԸ
այմանագրի
երեսունորյ
ության վճար

Ստորագրող Արմատ
(ստորագրություն)

« 19 » 03
(տրման ամիս և օր)

23.08.2013

Ստանդարտացրած 01 Ա 932262
(պետական գրառում)



Հավելված 1
«15» հունիսի 2016թ. կնքված N ՀՀՍՆ-19/1-16
ծածկագրով փարածքի ենթավարձակալության պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԱՐԱԾՔԻ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ				
N	Անվանում	Նկարագիրը	Գտնվելու վայրը	Ժամկետ
1	Տարածքի ենթավարձակալության	տարածքը կազմում է 106.4 (մեկ հարյուր վեց ամբողջ չորս) քառակուսի մետր՝ խոնավությունից պաշտպանված, լուսավոր պահեստային տարածք	ք.Երևան, Կոմիտաս 49/2	Մինչև 2016թ 4-րդ եռամսյակ


Վ Ա Ր Ձ Ա Վ Ա Լ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան Վ. Սարգսյան 3
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011000107
ՀՎՀՀ 02705838


(ստորագրություն)



Վ.Տ.

Վ Ա Ր Ձ Ա Տ ՈՒ
«Ձանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
«Էյջ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001-0040013-001
ՀՎՀՀ 00830786


(ստորագրություն)



Վ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
					142855	142855	142855	142855	142855	142855	142855	999985

Վ Ա Ր Ձ Ա Կ Ա Լ
 ՀՀ սփյուռքի նախարարություն
 ք. Երևան Կ. Սարգսյան 3
 ՖՆ Գործառնական վարչություն
 Հ/Ը 900011000107
 ՀՎՀՀ 02705838

Վահագն Կարամյան
 (ստորագրություն)
 Կ.Տ.

Վ Ա Ր Ձ Ա Տ ՈՒ
 «Չանգակ-97» ՍՊԸ
 ք. Երևան, Կոմիտաս 49/2
 «Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
 Հ/Ը 217001-0040013-001
 ՀՎՀՀ 00830786

Վահագն Կարամյան
 (ստորագրություն)
 Կ.Տ.

Պայմանագրի կողմ՝ Վարձատու

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

Վարձակալ

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

**ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

< > 2016թ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պարզվիրարություն՝ Վարձակալ

ի

դեմս

և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք
ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « _____ » « _____ » 20 թ. կազմված՝
գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով
նախատեսված՝ ստորև նշված պարտականությունը համապատասխանում են Պայմանագրով
ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն
արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը՝ Վարձատուն նշված
պարտականությունը

Տարածքի ենթավարձակալության								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ /	Վճարման ժամկետ ը/ըստ վճարման ն ժամանա կացույցի /
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ տարածքի ենթավարձակալության վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը
հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

ՎԱՐՁԱՏՈՒՆ ՀԱՆՁՆԵՑ

ՎԱՐՁԱՎԱԼՆ ԸՆԴՈՒՆԵՑ

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Վարձատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ
Սույնով արձանագրվում է, որ -----ի (այսուհետ՝ Վարձակալ)

և

(Պատվիրատուի անունը)
-----ի (այսուհետ՝ Վարձատու) միջև 20 թ. ----- -ին կնքված N -----

(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վարձատուն 20 թ. ----- -- -ին հանձնման-
ընդունման նպատակով Վարձակալին հանձնեց

Տարաժքի ենթավարձակալություն		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ազգանուն, անուն

ստորագրություն